

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱԷՄՁԻ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	Ախտահանիչ նյութ բժշկական արտադ- րատեսակների ախտահանման և ն ախամանրեագերծմ ան համար	Չինաստան Հնդկաստան Ռուսաստան Ուկրաինա Բելառուսիա Եվրոպա	Բաղադրությունը՝ ՉԱՄ, ՄԱՆ, Քլորիեքսիդինի բիգլյուկոնատ, ֆերմենտային կոմպլեքս՝ ոչ պակաս քան 3 Էնզիմի պարունակությամբ (լիպազա, ալֆա- ամիլազա, պրոտեազա), մակերևութային ակտիվ նյութեր ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը՝ 1լիտր պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս, քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1 տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և

			<p>դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 3 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը՝ 4-րդ, 5-րդ դաս: Պետք է ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:</p>
--	--	--	--





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО АЕМДЖИ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЗЦЧ-ЕЦХЦПЗР-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
11			